

կուրդ է, ժամանակագրութիւն նշա-
նաւոր անցքերի, ռուսաց կալս. տու-
նը, կովկասի նահանգների կառա-
վարիչներ, Հալասաանեայց եկեղե-

ցու վարչութիւն, 100 բուբուռ տո-
կոսները և Երազանք:

Ա.

ԱՂԱՆԵԱՆՅ ԳԻՒՏ քահանայ. «ՕՐԱՅՈՅ» 1890 թ. Գր. և հայ-
կակ. ՏՅԶԲ (1382) և տոմարական թւակ. տղղիս ՌՅԼԹ. Թիֆլիս,
տպ. Մարտիրոս., հրատարակութիւն «Աղբիւր» պատկեր. ամսագրի:
1/32 ծալ, 126 երես, Դինն է 15 կոպ.:

Յաւելածը տալիս է 1) համա-
ռօտ ժամանակագրութիւն հայոց
պատմութիւնից, 2) կենդրոնական

ղրավաճառանոցի հալերէն գրքերի
ցուցակը:

„АРМЯНСКИЙ КАЛЕНДАРЬ“ (сокращенный) на 1890 г. съ пред-
казаніями. IV-й годъ. Тифлисъ, типогр. Мартыросянца, 1889 г.

Այս օրացուցի, որ հաշկական է,
ռուսաց լեզուով թարգմանելու մի-
ակ հիմքը աչն հետաքրքրութիւնն է,
որ մի քանի տարիներէից ի վեր
սկսել է ցուց տալ ռուսաց տեղա-
կան (Թիֆլիսի) հասարակութիւնը
դէպի հաշկական «Էֆեմերդին» Նթէ
հաշկական Էֆեմերդին կոչւած էլ լի-
նի բռնել կենսութիւն, Հելւիգի և մա-
նաւանդ Տօբալդօի տեղը, որոնցից
մանաւանդ վերջինս մեծ հռչակ ըս-
տացաւ Արեմանեան Եւրոպայում,—
հաշկութիւնը չէր ձեռք բերիլ մի նոր

պարծանք կուտուրական աշխարհի
առջեւ, իսկ վերջինս մի նոր վաս-
տակ չէր ունենալ աչդ բանից:

Այս օրացուցի հրապուրանքնե-
րից երկրորդն է՝ ճաշի օրացուց
Թիֆլիսի մօքալաքի, ալսինքն՝ բուն
Թիֆլիսցու: Աչդ մասը կազմւած է
փորձւած մարդու ձեռքով և մեծ
հմտութեամբ: Տեղական անուննե-
րից գերադասութիւն տւած է հալե-
րէն անուններին, որ միանգամայն
արդարութիւն է:

Ա. Ա.